ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ 2016-2020 ԹԹ. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ

15.07.2016թ.

Հայաստանի Հանրապետության մեծարգո վարչապետ, պարոն Աբրահամյան,

Խորհրդի հարգարժան անդամներ,

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի զարգացմանը միտված մեր աշխատանքներն արտացոլված են համալսարանի 2016-2020 թվականների զարգացման ռազմավարական ծրագրում, որտեղ մանրամասն ներկայացված են համալսարանի զարգացման հաջորդ շրջանի մեր մոտեցումները: Ծրագիրն արժանացել է համալսարանի գիտական խորհրդի հավանությանը: Քանի որ այն ամբողջությամբ նախապես տրվել է ձեզ, փորձեմ համառոտ ներկայացնել այդ ծրագրի գլխավոր շեշտադրումները:

Համալսարանի 2016-2020 թվականների զարգացման ռազմավարական ծրագիրը կազմել է նախապես ձևավորված խումբ: Ծրագրի ստեղծմանը նախորդել է տևական աշխատանք՝ կատարվել են ներքին և արտաքին շահակիցների պահանջմունքների ուսումնասիրություն, հստակեցվել են ներկա հիմնախնդիրները, վերաձևակերպվել է համալսարանի առաքելությունը, հստակեցվել է բուհի տեսլականը, ճշգրտվել են գերակայությունները: Ռազմավարական ծրագրի իրագործման համար պատրաստվել է գործողությունների ծրագիր, սահմանվել են գլխավոր նպատակներն ու ենթանպատակները, գործողությունների պատասխանատուները, ցուցիչները, ինչպես նաև գործողությունների կատարման ժամանակացույցը:

1. Շահակիցների կարիքները և մարտահրավերները

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կառողությունների զարգացման, գործընթացների կանոնակարգման, ռեսուրսներով կայուն ապահովվածության հիմնախնդիրները չեն կորցրել

իրենց արդիականությունը, իսկ մասնագիտական կրթական ծառայությունների շուկան հասունացել է. եթե 2012•2016 թթ. զարգացման ռազմավարությունը նախատեսված էր այնպիսի միջավայրի համար, որտեղ թե՛ ներքին, թե՛ արտաքին շահակիցները դեռևս ամբողջությամբ չէին գիտակցում իրենց շահերը, ապա 2016•2020 թթ. դա միտված է կայացած՝ ավելի հասուն և ավելի պահանջկոտ միջավայրի ապահովմանը: Այստեղ կենսականորեն կարևոր է ձևավորել և պահպանել բարձր մրցունակություն՝ հիմնված ոչ թե ավանդույթից բխող գործոնների, այլ մարտահրավերները կանխատեսելու, դրանց պատասխանելու և շահակիցների կարիքները լավագույնս պատկերացնելու ունակության վրա:

2012•2016 թթ. հիմնական մարտահրավերներ էին ՀՊՏՀ գործունեության համակողմանի կանոնակարգումը, կառավարման ռազմավարական դիրքորոշման ներդրումը, ֆինանսական դժվարությունների հաղթահարումը, հետազոտական գործունեության խթանումը և այլն: Կրթական ծառայությունների շուկայի հասունացմանը զուգահեռ և համահունչ՝ ներկայումս փոխվել են ՀՊՏՀ շահակիցների (հատկապես՝ արտաքին) կարիքները:

Ռազմավարական ծրագրում և դրանից բխող գործողություններում ՀՊՏՀ-ն ձգտում է հաշվի առնել և բավարարել իր բոլոր շահակիցների՝ Հայաստանի Հանրապետության գործատուների, ուսանողների և դիմորդների, նրանց ծնողների, օտարերկրյա շահակիցների, պրոֆեսորադասախոսական, ուսումնաօժանդակ և վարչական աշխատակազմի կարիքները:

Հաշվի առնելով արտաքին և ներքին միջավայրերի գործոնների, ինչպես նաև շահակիցների կարիքների ուսումնասիրությունների արդյունքները՝ առաջիկա տարիներին ՀՊՏՀ հիմնական մարտահրավերներն են տնտեսագիտական մասնագիտություններով կրթական ծառայությունների շուկայում մրցակցության ուժեղացումը, վերջնարդյունքների վրա հիմնված կրթական ծրագրերի արդյունավետ գործարկումը, ֆինանսական կայունության, մարդկային ռեսուրսների մոտիվացման ապահովումը,

որակի ապահովման ներքին համակարգի լիարժեք գործարկումը, հետազոտական գործունեության ընդլայնումը և արտաքին կապերի զարգացումը:

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը, կարևորելով ստեղծված իրավիճակը և կրթության ոլորտում տեղի ունեցող փոփոխությունները, նպատակ ունի արագորեն վերանայելու կրթական ծրագրերի բովանդակությունը և ձևաչափը, ինչպես նաև կիրառվող կրթական տեխնոլոգիաները: Բուհի համար կրթական վերջնարդյունքների ձևավորմանն ուղղված ծրագրերի մշակման և իրագործման անհրաժեշտությունը, առաջին հերթին, պայմանավորված է փոփոխվող հասարակական պահանջմունքներով, որոնք ավելի են կարևորում աշխատաշուկա մուտք գործող շրջանավարտների ոչ միայն տեսական գիտելիքը, այլև գործնական հմտությունները կարողությունները: Կրթական վերջնարդյունքներով ուսումնական գործընթացի պլանավորումը էականորեն կբարելավի նաև կրթության որակը ՀՊՏՀ-ում:

Համալսարանի առաջիկա տարիների զարգացման յուրաքանչյուր ծրագրում, այդ թվում՝ ռազմավարական, պետք է առանձնահատուկ տեղ հատկացնել կայուն եկամուտների ապահովման խնդրին: Եկամտի այն աղբյուրները, որոնք քիչ թե շատ բավարար են համարվել նախորդ ժամանակաշրջանում, կրճատման ակնհայտ միտումներ են ցուցաբերում վերջին տարիներին և այլևս չեն համապատասխանում համալսարանի բնականոն գործունեության ապահովման պահանջներին: Արտաքին և ներքին միջավայրերի վերլուծության արդյունքները ևս ակնհայտորեն ընդգծում են ֆինանսավորման նոր աղբյուրների հայթայթման և դրանց միջոցով կայուն եկամուտների ապահովման կարևորությունը: Վերլուծության ենթարկված այնպիսի գործոններ, ինչպիսիք են ժողովրդագրական փոփոխությունները, մրցակիցների քանակի տարեցտարի ավելացումը, հանգեցնելու են դիմորդների քանակի էական կրճատմանը: Ուստի եկամտի նոր աղբյուրների որոնումը և զարգացումը սույն ռազմավարական ծրագրում ընդունվել են որպես գերակայություն:

Ներկայում սրընթաց փոփոխություններ են տեղի ունենում կըրթության միջազգային ոլորտում՝ ազդելով նաև Հայաստանի Հանրապետության կրթական համակարգի, դրա կառավարման, որակի ապահովման

քաղաքականության և այլ գործընթացների վրա: Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանն իրականացնում էհամապարփակ բարեփոխումներ՝ միտված կրթության որակի, բուհի գործունեության և ուսանողների գնահատման արդյունավետության մակարդակի բարձրացմանը: Դեռևս 2011 թվականից առանցքային է համարվում կրթության որակի մշակույթի ստեղծումը, դրա զարգացումը և հետագա լիարժեք գործարկումը որակի ներքին համակարգի ապահովման նպատակով:
Վերոնշյալ մարտահրավերներին ընդառաջ՝ ՀՊՏՀ ռազմավարական զարգացման ուղղությունները բխում են արտաքին և ներքին միջավայրերի կարևորագույն գործոններից և դրանց համադրումից: Փորձագիտական հարցման արդյունքում, որին մասնակցել են ուսանողներ, շրջանավարտներ, գործատուներ, պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ համակազմի ներկայացուցիչներ, առանձնացվել և գնահատվել են ՀՊՏՀ ուժեղ և թույլ կողմերը, ինչպես նաև զարգացման հնարավորություններն ու սպառնալիքները:

2. ՀՊՏՀ առաքելությունը

Հարգելի ներկաներ

Համալսարանի զարգացման ռազմավարական ծրագրով սահմանել ենք ՀՊՏՀ առաքելությունը, այն է՝

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը պատրաստում և վերապատրաստում է մասնագիտական գիտելիքով, հմտություններով և կարողություններով օժտված մասնագետներ հայաստանյան և միջազգային աշխատաշուկաների համար, ինչպես նաև կատարում է հիմնարար և կիրառական գիտական հետազոտություններ՝ միտված տնտեսագիտական մտքի և Հայաստանի տնտեսության զարգացմանը:

Համալսարանի արժեքներն են՝ ակադեմիական ազատությունը, ուսանողակենտրոն ուսումնառությունը, նորարարության հետևողական խրախուսումը, բարձր արդյունքների միտված գործունեությունը,

աշխատակիցների գիտելիքի և մասնագիտական ունակությունների պարբերական կատարելագործումը և նրանց առաջխաղացումը, թիմային համագործակցային առաջարկը, մասնակցայնությունն ու նպաստավոր ակադեմիական միջավայրը, կարգապահությունը և պատշաճ աշխատանքը, փոխադարձ հարգանքը, արդար և թափանցիկ գործունեությունը, համընդգրկուն մտածելակերպի ապահովումը՝ ազգային առանձնահատկությունների պահպանմամբ:

3. ՀՊՏՀ տեսլականը

Զարգացման ռազմավարական ծրագիրը սահմանում է մեր տեսլականը (2020), ըստ որի՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը արդիական կրթական ծրագրերով պատրաստելու է մասնագիտական գիտելիքով, հմտություններով և կարողություններով օժտված բացառապես մրցունակ մասնագետներ**,** ովքեր համա-պատասխանում են տեղական և միջազգային աշխատաշուկաների պահանջներին***:*** Միաժամանակ**,** համալսարանը դառնալու է տնտեսագի-տական մտքի կենտրոնացման, հիմնարար և կիրառական տնտեսագիտական հետազոտությունների իրականացման տարածաշրջանային առաջատար կառույց՝ սերտորեն համագործակցելով տնտեսության պետական և մասնավոր հատվածների հետ՝ ինչպես տեղական, այնպես էլ միջազգային մակարդակներով: Ցանկանում եմ նշել, որ միջազգային կրթական համակարգին ինտեգրվելու ճանապարհին մեր հստակ մոտեցումն է պահպանել ազգային առանձնահատկությունները և մնալ կրթության ազգային ոգուն և արժեքներին հավատարիմ:

4. ՀՊՏՀ **2016-2020** թթ**.** ռազմավարական գերակայություններն են**.**

I. Կրթական գործընթացների բարեփոխում
II. Որակյալ մարդկային ռեսուրսներով ապահովվածություն
III. Եկամուտների բազմատեսակացում, նոր աղբյուրների գործարկում և շարունակական զարգացում

IV. Միջազգայնացում

V. Կառավարման համակարգի բարելավում և գործընթացների կանոնակարգում քաղաքականությունների և ընթացակարգերի մշակմամբ և ներդրմամբ

VI. Կրթության որակի ներքին ապահովման համակարգի լիարժեք գործարկում

Հարգելի ներկաներ

Առաջիկա տարիներին համալսարանի ռեսուրսները բաշխվելու են հօգուտ գերակա հռչակված զարգացման ուղղությունների: Գործունեության մյուս ոլորտներին ռեսուրսներ հատկացվելու են՝ հաշվի առնելով, թե որքանով կարող են դրանք նպաստել ուսումնառության գործընթացի արդյունավետության և համալսարանի գրավչության մակարդակի բարձրացմանը:

Ռազմավարական գերակայությունների բնագավառում լիարժեք նվաճումներ ունենալու և 2020 թ. տեսլականն իրականություն դարձնելու համար սահմանվել են ՀՊՏՀ 2016•2020 թթ. նպատակները և դրանցից բխող ենթանպատակները:

4.1. Կրթական գործընթացների բարեփոխում

Կրթական գործընթացների բարեփոխման ներքո սահմանել ենք 3 նպատակ՝

- աշխատաշուկայի պահանջներին համապատասխան կրթական ծրագրերի աստիճանական բարեփոխում
- տարբեր հաստատությունների, կազմակերպությունների, պետական և մասնավոր հատվածի հետ համագործակցության ընդլայնում և ակտիվացում
- կրթական վերջնարդյունքների մշակման և ձեռքբերման գործընթացում պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների ներգրավվածության մակարդակի բարձրացում

4.2. Որակյալ մարդկային ռեսուրսներով ապահովվածություն

Որակյալ մարդկային ռեսուրսներով ապահովվածությունը ենթադրում է 2 նպատակ՝
-աշխատողների մասնագիտական որակների բարելավում
-աշխատողների մոտիվացման և աշխատանքից բավարարվածության մակարդակի բարձրացում

4.3. Եկամուտների դիվերսիֆիկացում, նոր ֆինանսական աղբյուրների օգտագործում և զարգացում

Այս նպատակի իրականացման համար պլանավորել ենք՝
- կարճաժամկետ ուսուցման, հատուկ դասընթացների կազմակերպման փորձի արմատավորում
- գիտական հետազոտությունների առևտրայնացում
- մասնագիտական խորհրդատվական ծառայությունների մատուցման ինստիտուտի ստեղծում և զարգացում
- արտաքին ֆինանսավորմամբ (միջազգային և տեղական) նոր ծրագրերին մասնակցություն՝ գործընկերային հենքի ամրապնդմամբ, եկամուտների այլ աղբյուրների բացահայտում և գործարկում

4.4. Գործունեության միջազգայնացում

Այստեղ սահմանել ենք հետևյալ նպատակները՝
- լիարժեք կրթական ծառայությունների հասանելիության ապահովում և մատուցում օտարերկրյա ուսանողներին
- ուսանողների և դասախոսական կազմի շարժունության ապահովում
- գիտահետազոտական գործունեության արդյունքների միջազգայնացում

4.5. Կառավարման համակարգի բարելավում և գործընթացների կանոնակարգում՝ քաղաքականությունների և ընթացակարգերի մշակմամբ ու ներդրմամբ

Այստեղ սահմանել ենք հետևյալ նպատակները՝
-գործընթացների անշեղ իրականացում՝ համաձայն նախապես հայտնի ընթացակարգերի
-կառավարման համակարգի բարելավում
-բարեվարքության ամրապնդում և բուհի գործունեության լիարժեք անկախության ապահովում

4.6. Կրթության որակի ներքին ապահովման համակարգի լիարժեք գործարկում

Գլխավոր նպատակներն են՝
-որակի ապահովման համակարգի ռեսուրսային ապահովվածության մեծացում
-որակի ապահովման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության ընդլայնում
-համալսարանի գործունեության բոլոր ոլորտներում որակի ապահովման շրջափուլերի կիրառում
-որակի ապահովման արտաքին և ներքին գնահատումների համար անհրաժեշտ հիմքեր ձևավորող տեղեկատվության առկայություն

Հարգելի ներկաներ

Նշված նպատակների ու ենթանպատակների իրականացման անհրաժեշտ գործողությունները, դրանց կատարման ժամանակացույցը, գնահատման ցուցիչները և դրանց պատասխանատուները սահմանված են
2016•2020 թթ. գործողությունների ծրագրով, որի հիման վրա կմշակվեն տարեկան պլաններ:

Շնորհակալություն ուշադրության համար